

ԹՈՒՐԳԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՊԻՏԻ ՔՆՆԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՈՒՐԳԻԱ ՀԱՐՑԸ

Երեքշաբթի, Ապրիլ 28-ին, Թուրքիոյ Ազգային ապահովութեան խորհուրդը, Նախագահական պալատին մէջ տեղի ունեցաւ ժողով մը ընթացքին պիտի քննէ Հայաստան-Թուրքիա սահմանը բանալու եւ Հայաստանի հետ յարաբերութիւնները բնականոնացնելու, ինչպէս նաեւ այդ քայլերուն հանդէպ Ատրպէյճանի հակազդեցութեան անջնորդ հարցերը:

Մինչեւ վերջերս, Թուրքիա 1993-էն ի վեր փականած Հայաստանի հետ սահմանը վերաբանալու նախապայման դարձուցած էր Լեռնային Ղարաբաղէն կամ անուազն անոր շուրջ գտնուող տարածքներէն հայկական ուժերուն հեռանումը, սակայն Հայաստանի հետ յարաբերութիւնները բնականոնացնելու նպատակով տարուող բանակցութիւնները սկսած են նեղացնել Ատրպէյճանը:

Պաշտօնապէս, երկրին զինուորական ուժերու հրամանատարութիւնն ու կառավարութիւնը դէմ են Արցախի տագնապին լուծումէն առաջ սահմանը բանալու գաղափարին:

Ըստ թերթին, թրքական իշխանութիւնները Հայաստանի իշխանութեանց առաջարկած են ատրպէյճանցի գաղթականներուն Լեռնային Ղարաբաղ վերադառնալու արտօնութիւն շնորհել, որով տեղ Թուրքիա կրնայ Հայաստանի հետ սահմանը բանալ ամիսը մէկ անգամ եւ ապա՝ ամիսը երկու անգամ: Յարաբերութեան բնականոնացումէն եւ ապահովական հարցերու վերացումէն տեղ, կարելի պիտի ըլլայ սահմանը

միշտ բաց պահել:

Այս ժողովէն ետք կ'ակնկալուի, որ Թուրքիոյ Նախագահ Ապտուլլահ Կիլ Պաքու այցելէ եւ այս ծրագրին մանրամասնութիւնները անձամբ փոխանցէ Ատրպէյճանի Նախագահ Իլիամ Ալիեւին:

Նոյն ժողովին ընթացքին պիտի քննուին նաեւ Զիւրախտանի բաւուրական կուսակցութեան անդամներուն ներում շնորհելու եւ Աֆղանիստան յանձնելու 1000 թուրք զինուորներ դրելու հարցերը:

Միւս կողմէ, պետական նախարար ու կառավարութեան խօսնակ Ճեմալ Չիչեք Երկուշաբթի օր տեղի ունեցած կառավարութեան նիստին ընթացքին յայտնեց, թէ Թուրքիա չի կըրնար անել քայլ մը, որ «վիշտ պիտի պատճառէ Ատրպէյճանի»:

«Ասիկա միշտ այսպէս եղած է, այսօր ալ այդպէս է, բայց կը տեսնեց, որ այս վերջերս ոմանք այնպէս մը կը խօսին, որ իբրեւ, թէ Թուրքիա կը շարժի Ատրպէյճանի շահերուն դէմ: Այդպիսի բան չկայ», վստահեցուց Չիչեք:

Չիչեք անցեց, որ միայն Ատրպէյճանի համար չէ՛ որ այսպէս է, այլ բոլոր թրքախօս պետութիւններուն նկատմամբ Թուրքիա նման կեցուածք մը ունի: Գալով Հայաստանի հետ բանակցութիւններուն, Չիչեք ըսաւ, որ երկու կողմերն ալ որոշած են հանրութեան բացատրութիւն չտալ մինչեւ, որ գործնական քայլ մը չառնուի: Ղարաբաղեան հարցին մէջ

Թուրքիոյ կեցուածքն ալ յայտնի է եւ չէ փոխուած, ըսաւ ան: «Ղարաբաղի հարցը կը լուծուի միայն Ատրպէյճանի հողային ամբողջականութեան շրջագծով», շեշտեց Չիչեք:

Իր կարգին, ազգայնամուլներու Ազգայնական շարժում կուսակցութեան փոխնախագահներէն Աթիլլա Քայա, որ Ատրպէյճան գացած էր մասնակցելու համար Թուրքիա-Ատրպէյճան յարաբերութիւններու մասին աշխատաժողովի մը, վերադարձին ըսաւ, որ Ատրպէյճան շատ դառնացած է Թուրքիայէն եւ վարչապետ Ռեչեփ Թայիփ Էրտողանի վերջին յայտարարութիւնը, ըստ որուն առանց Ղարաբաղի հարցի լուծման Հայաստանի սահմանը չի բացուիր, գոհացում չէ պատճառած, որովհետեւ Պաքուի մէջ կ'ըսուի, որ Թուրքիա ու Հայաստան համաձայնութիւն գոյացուցած են որոշ հանգրուաններով սահմանը բանալու մասին:

Վերջապէս, ընդդիմադիր Հանրապետական ժողովրդային կուսակցութեան Իզմիրի երեսփոխան Ճանան Արըքման կրկին ծայր բարձրացուց Հայաստան-Թուրքիա մերձեցման հարցի կապակցութեամբ ու ըսաւ, որ Հայաստանի սահմանը բանալ կը նշանակէ՝ «կռնակէն դաշունահարել ոչ միայն Ատրպէյճանը, այլ նաեւ Թուրքիան»: Ըստ անոր, սահմանին բացումը «անդարմանելի վնաս պիտի պատճառէ Թուրքիոյ տնտեսութեան ու ուժանիւթային եկամուտներուն»:

Բժշկական ՅԵՐԱԹԱՓՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Նախորդ յօդուածով ներկայացուցինք մարդկային «մազային դրուփները», խօսեցանք զըլխամաշկի մասին եւ տուինք նախնական գիտելիքներ գանկը պարուրող մորթային կազմութեան շուրջ եւ այն ազդակներու վրայ որոնք կը յամաշջան են մազերու աճը:

Այս բաժնով պիտի խօսինք՝ թէ «ինչո՞ւ է ինչպէ՞ս կը թափին մազերը» նիւթին շուրջ, տակաւ առ տակաւ լուսաբանելով այն մթամասց հիւանդութեան գիտութիւնը՝ որ շատերուն մոծաւանջ մը դարձած է:

Երիտասարդներ կամ պատանիներ, մտահոգի կացութեան մը կը մատուցին երբ առատեան սանտրումէն յետոյ մազի մի քանի թելեր նշմարեմ ծագեցին վրայ: գիտութիւնը կ'ըսէ թէ օրական 20-էն 40 մազ կը թափին մարդկային գլխին, ու ասիկա բնական երեւոյթ մըն է, ինչպէս կը պատահի անասուններուն, սակայն մարդկային այս տերեւթափը չի նմանիր այս վերջիններուն, որոնք եղանակի մը առաջի տեղի ունենան միշտ, իսկ մեր մօտ չկայ այդ օրերը:

Նկատուած է թէ այդ մարդու մը իւրաքանչիւր մազը կ'աւարի 3-էն 4 տարի, իսկ կիներու մազը 5-էն 6 տարի է ւաւելի: Մանուկներու մազերը ւաւելի շուտ կը վերանորոգուին քան չափահասներունը, իսկ որքան յամաշջան կեանքի քառուղիէն այնքան ւաւելի կը մօտենանք ճաղատութեան եթէ թափած մազերուն տեղ նորերը չգրաւեն:

Կան շատ մը ծերունիներ որոնք տակաւին կը պահեն իրենց մազային ամբողջութիւնը թէեւ արծաթածուած: Խոնկուն ու հիւանդութիւնը ոչ մէկ կապ ունին գլխամաշկի փոփոխման հետ, եթէ երբեք անոնց չընկերանայ անհոգութիւնը: Զրաշալի մազեր ունենալ՝ Վիցթոր Զիլկօ, Իպսէն, Շաթօպրիան, Կտօթէ, Պեթօհովէն, Պօսիլէ, Դիպէնօ, եւայլն՝ յիշելու համար մի քանի միջազգային անուններ, իսկ հայ իրականութեան մէջ եւս ունեցած ենք Նոյնանման գլուխներ՝ եթէ միայն աչք մը պտտցնենք մեր շրջապատը գտնուող ւալեհեր ծերունիներուն:

Ըստ կարգ մը գիտնականներուն՝ հերթափոխութեան գլխաւոր պատճառներէն մին է սննդանիւթի պակասը, ինչ որ առարկելի է, որովհետեւ կան բազմաթիւ խիտարմատ գանկեր որոնք ստորին դասակարգէն կու գան: Միաժամանակ բանակներ կարելի է կազմել հերթափոխ ազնուականներով, որոնք մէջ դուք կը նշմարեք գիտնականներ, մտաւորականներ, բժիշկներ եւ այլ տիպաբաններ են հանձնարող անձնատրուփները: Ուրեմն, սնունդը՝ թէ ոչ բոլորովին, գէթ գլխաւոր պատճառը չէ հերթափոխութեան, ինչ որ տակաւին կը քանակ յեղեղել շատեր:

Գլխամաշկի ւաւելի ճարպանիւթ կը պարունակէ քան որեւէ մորթային շրջան ու ասիկա պատճառ կը դառնայ, որ անիկա թեփիկներ յամաշջ բերել մորթի մակերեսին վրայ, ինչ որ սկզբնական ամփոփներուն հազիւ տեսանելի կ'ըլլայ, իսկ երբ ճրագիւղային գեղձերը սաստկացնեն ճարպանիւթի արտադրութիւնը, երեւան կու գան սփարագոյն աղտոտ բեւիզիկներ, որոնք կը սկսին թառիկ հագուստեղէններու վերի մասերը՝ տաղտուկ եւ նեղարտութիւն պատճառելով ենթակայներուն:

Այս արշաւանքը պատճառ կը դառնայ հիւսկելի եւ գեղձերու ազատ գործունէութեան, մանաւանդ շնչառութեան եւ կը կատարէ իր աղիտալի դերը:

Ուստի պէտք է նախագոյնապէս միջոցներու ձեռնարկել՝ առաջին անգամ համար դանդաղաքայլ, սակայն հաստատակամ յամաշջազոյց հերթափոխութեան:

Դարմանումի եղանակներու մասին գրելէ առաջ հարկ տեսանք մի քանի լուսաբանութիւններ եւս հրաժեշտ «Արարատ»-ի ընթերցողներուն, որոնք սերտօրէն կապուած կը մնան հերթափոխութեան եւ մազային դրուփեան ընդհանուր սարքաւորումին հետ, թէեւ բացառութիւններ միշտ ալ գտնուած են, երեւոյթ մը որ թե՛նուկի առջեւ դրած է գիտութիւնը:

Հաստատուած առաջին վկայութիւնը այն է՝ թէ գլխամաշկի տերեւթափը ժամանակակից է, առողջ մազեր ունեցող հայերէն միշտ ալ տոկոս մազարմատներ պարունակող գաւակներ առաջ եկած են, որոնցմէ շատ քիչ բացառութեամբ միայն ճաղատութեան հակած են, որոնք սակայն ունին իրենց պատճառները:

Ուրեմն մաքրութիւնը հիմնական չէ հերթափոխութեան համար: Եղած են մարդիկ, որոնք շաքարներով անլուայ ձգած են իրենց գլուխը, բայց եւ այնպէս հերթափոխութիւն չեն կրած:

Կարծի մօրուք ունեցող տղամարդիկ առաջ են շուտափոյթ լերկութեան, որովհետեւ երեսի դրուած մազային ուժը կը չզգոքացնէ գանկի վրայի մազերու կենսունակութիւնը, որը ստիպուած տեղի կու տայ անխուսափելի ճաղատութեան:

Կան մարդիկ որոնք մազերը կը սկսին թափիլ ճիշդ գագաթէն, ուրիշներունը՝ երկու կողմերէն կամ մէջտեղէն, կարելոք այն է որ աշխատանք թափուի, որպէսզի ոչ մէկ կողմէն չտարածուի այս պիտը:

Մազեր ալ կան որ կանուխ կը ճերմկին, սակայն երբեք չեն թափիր-քնախօսական երեւոյթ մըն է այս: Շատ քիչ գլուխներ կան որ ճերմկելով հանդերձ կը հերթափոխուին:

Ինչպէս քիչ վերը շեշտեցինք, ժամանակակիցութեան կարելի է վերագրել այս երեւոյթները՝ բացառութիւնները յարգելով միշտ: Ծերմկած մազերը տոկոսն կ'ըլլան ու կը մնան ցմախ:

Ինչպէս թեփը (բեւիզիկ) նոյնքան մը եւս մազերու երկարութիւնը կը վտանգեն անոր առողջութեան, որոնք որոշ աստիճան մը երկնալէ յետոյ կը սկսին ճաթափել պէտք եղած աւիշը չհասցնելով մազարմատային բջիշներուն:

Ձեր մանկութենէն սկսեալ պայքարեցե՞ք մազերու երկարութեան դէմ: Կարգ մը դժարոցներու մէջ՝ տարեմուտին եւ գարնան խուզել կու տան մանուկներու գլուխները, խիստ գեղեցիկ օրէնք մըն է այդ: Այս աշակերտներուն մազերը փճացումէ կը փրկուին (եթէ երբեք ժամանակ առ ժամանակ հետեւին այդ մարզանքին) աչքերու տեսողութեան կը նպաստէ, գլխամաշկին կը գործարկէ ու ռիշիկներու բոյն ըլլալու մոծաւանջէն կ'ազատի:

Այս մասին առարկող երիտասարդներու կը հանդիպինք յաճախ - թէ ինչո՞ւ կիներու մազերը չեն թափիր, որոնք երբեմն մինչեւ կէս մեթր կ'երկնցնեն:

Պատասխանը սա է.- Կիները երկի մարդոց նման մազերու առատութիւն չունին՝ մարմնի գանկազան շրջաններու վրայ (կուրծք, թեւ, սրունք եւայլն), որոնք բովանդակ ուժը կ'երթայ գլխու մազերուն, անոր համար է սիւս որ կիները հերթափոխութեան չեն ենթարկուիր, թէեւ բացառիկ պարագաներուն վարակուողներ ալ գտնուին, անիկա սակայն ոչ խնամքի բացակայութենէ կու գայ, ոչ ալ անհոգութենէ, այլ գլխաւորապէս եւ կամ անոր նման տարբեր հիւանդութիւններէ (մեր նիւթէն դուրս կ'իյնայ այդ հարցը):

Յերթափոխութիւնը կը սկսի 17-18 տարեկանին եւ կանգ կ'առնէ 40-ին:

ՄԻ ԶԱՓԱԶԱՆՑԷՔ ԴԵՂԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ

Բժիշկներու մտահոգութիւն կը պատճառէ հիւանդներու դեղամոտիւքները...:

Գեղեցիկ զգացում մըն է դեղերու առթած վստահութիւնը, որ որոշ չափով հիմը կը կազմէ բժշկութեան, սակայն բժշկական խնամքներ առաջ հիւանդ եւ բժիշկ պէտք է յարգեն հետեւեալը.

Բժիշկը կարելի եղածին չափ պէտք չէ սխալի:

Բժիշկը եւ հիւանդ պէտք չէ մոռնան, թէ հիմաուրք շրջաններու մէջ հեղեղները նոյն բանը կը գործածէին դեղի եւ թոյնի համար:

Բժիշկի մը բովանդակ արուեստը կը ներկայանայ այս երկու սկզբունքներուն մէջ:

Պէտք է խորհիլ որեւէ որոշում տալէ առաջ եւ բժիշկը պէտք է ունենայ պէտք եղած հմտութիւնը:

Անհնափոք անհանգստութեան մը պարագային, պէ՛տք է բժիշկին դիմել:

Անշուշտ ոչ: Կան շատ մը անհնազանդ անհանգստութիւններ, որոնք առանց բժիշկին ալ կը խնամուին, կրնաք նաեւ առանց բժշկական խորհուրդի գնել եւ գործածել կարգ մը դեղեր ալ, սակայն կան կարգ մը դեղեր որոնք գործածութիւնը պէտք է թելադրուի բժիշկներու կողմէ:

Անհնազանդ անհանգստութիւնը (փե-

նեսելին, սիւլֆամին, սքրեփ-թոմիսին եւայլն), որոնք հրաշագործ ըլլալով հանդերձ, պէտք չէ վարժուիք անոնց:

Նորոյթի կարգ անցած են անթիպիոթիքները, որոնք կրնան լաւագոյն եւ յոռեգոյն արդիւնք տալ: Ընչո՞ւ է թէ չնորիս անթիպիոթիքներու կը բուժուին այսօր ատենոք մահացու համարուած շատ մը հիւանդութիւններ:

Պէտք չէ սակայն վարժեցնել մարմինը անթիպիոթիքներու: Անհնազանդ տարրութիւն մը իջեցնելու, հարբուիսի մը եւ կամ պարզ կրիփի մը դէմ անտեղի է անթիպիոթիք գործածել, մախընտրեցէք պարզ դեղերը:

Թորախտաւորը աչքը կ'առնէ այսօր խլութիւնը սքրեփթոմիսին գործածութեամբ, որովհետեւ այդ դեղէն կախեալ է իր փրկութիւնը:

Սակայն ուրիշներ պէտք է գզու-չանան ենթարկելու նոյն վտանգին: Անթիպիոթիքներէն ոմանք ալ աղիքային լուրջ բորբոքումներ յառաջ կը բերեն: Զորամֆենիլիլի չափազանց գործածութիւնը կրնայ լուրջ անարիւնութիւններ (անեմի) մը դեղեր ալ, սակայն կան կարգ մը դեղեր որոնք գործածութիւնը պէտք է թելադրուի բժիշկներու կողմէ:

Անհնազանդ անհանգստութիւնը (փե-նեսելին, սիւլֆամին, սքրեփթոմիսին եւայլն), որոնք հրաշագործ ըլլալով հանդերձ, պէտք չէ վարժուիք անոնց:

թիւններուն: Զորթիգոնը երբեմն աղէտներ յառաջ կը բերէ:

Զորթիգոնով ալ հիւանդի արդիւնքներ ձեռք կը ձգուին բժշկութեան մէջ: Սակայն կրնայ նաեւ աղիտաբեր դառնալ:

Զորթիգոնը եւ իր անանցները հակաբորբոքիչ ազդեցութիւն կը գործեն, կ'անցնեն հիւանդին դիմադրութիւնը, եւ սակայն երբեմն ալ վարակումներ կ'արթնցնեն մեր մէջ: Առանց բժշկական խորհուրդի չգործածել երբեք այս դեղը:

Հանդարտեցուցիչներու չափազանց գործածութիւնը անհասարակչուրիւն կրնայ յառաջ բերել մեր մէջ:

Չիլերը հանդարտեցնելու կամ բուժիլ համար գործածուած հանդարտեցուցիչներ (սոմնիֆեր եւ քալման) կրնան չափազանց գործածութեամբ պարագային ուղեղային անհասարակչուրիւն երեւան բերել:

Կազդուրիչ դեղերու, կենսանիւթներու գործածութիւնը պէտք է թելադրուի բժիշկներուն կողմէ: Գեղերուն գործածութիւնը պէտք է վերածուի նուազագոյնի:

Անոնց չափազանց գործածութիւնը կրնայ թունաւորում յառաջ բերել:

ՏՈՔԹ. ԲԱԳՐԻՍ

ԻՆՉՁ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՅ (21 ՄԱՐՏԵՆ 20 ԱՊՐԻԼ)

Ներկայի կացութիւնը ձեզմէ կը պահանջէ շատ ճկունութիւն, ազնուութիւն եւ բարի կամեցողութիւն: Լաւատեսութեամբ կրնաք ստեղծել յիշեալ բարեմասնութիւնները:

ՅՈՒՆ (21 ԱՊՐԻԼԵՆ 21 ՄԱՅԻՍ)

Զգացական մարզի մէջ նախընտրութիւն մը կատարելու ստիպողութեան տակ պիտի մնաք, քիչ մը պիտի շփոթիք, բայց յառաջիկայ քանի մը օրերու ընթացքին հարցը պիտի լուծուի պարզ ձեւով:

ԵՐԿՈՒՐԵԱԿ (22 ՄԱՅԻՍԵՆ 21 ՅՈՒՆԻՍ)

Ձեր պաշտօնին կամ գործին վերաբերեալ ոչ մէկ որոշում տուէք այսօր, որովհետեւ տակաւին հասունցած չեն հարցերը: Պայմանաժամ մը պահանջեցէք, որպէսզի լաւ խորհրդածք այս խնդրին շուրջ:

ԽԵՅԳԵՏԻՆ (22 ՅՈՒՆԻՍԵՆ 23 ՅՈՒՆԻՍ)

Կը կարծեք, թէ ոչինչ կը յառաջդիմէ եւ ամէն ինչ ձախող է. համարեցէք եւ կատարեցէք ձեր պարտականութիւնը. մնացեալը ինքնին կու գայ:

ԱՌԻԾ (24 ՅՈՒՆԻՍԵՆ 23 ՕԳՈՍՏՈՍ)

Ձեր ձեռքին ունիք բոլոր քարթերը՝ հասնելու համար ձեր երազած նպատակին: Օրը իրեն հետ պիտի բերէ բարոյական եւ նիւթական շահեր:

ԿՈՅՍ (24 ՕԳՈՍՏՈՍԵՆ 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ)

Աղուր հանդիպումներ, յանկարծական սիրահարութիւն կամ՝ ձեր սիրած քարեկամներուն հետ անակնկալ տեսակցութիւններ: Օրը պիտի անցնի խաղաղ եւ գուարք:

ԿԵՒՈՔ (24 ՍԵՊՏԵՄԲԵՐԵՆ 23 ՅՈԿՏԵՄԲԵՐ)

Պիտի ունենաք տեսակցութիւններ, որոնք պտղաբեր պիտի ըլլան երկար ժամանակի վրայ: Օրուան ընթացքին պիտի ունենաք դրամական շահեր:

ԿԱՐԻՃ (24 ՅՈԿՏԵՄԲԵՐԵՆ 23 ՆՈՅՏԵՄԲԵՐ)

Օրը նպաստաւոր է գործի մը ձեռնարկելու, նոր ծանօթութիւններ ստեղծելու: Երկիւնք պիտի օգնէ ձեզի այսօր եւ պիտի ուրախանաք:

ԱՂԵՆԱՄՈՐ (24 ՆՈՅՏԵՄԲԵՐԵՆ 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ)

Եթէ մտադրած էք համաձայնութիւն մը կնքել հաստատութեան մը հետ, օրը շատ յարմար է ստորագրելու համաձայնագիրը եւ գործի անցնելու: Մասնաւորաբար առեւտրական մարզի մէջ պիտի յաջողիք:

ԱՅԾԵՂՁԻՐ (22 ԴԵԿՏԵ